

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս գործադիր տնօրեն Բագրատ Ենգիբարյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, «Յունիքոմփ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրեն Արմեն Բալդրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ Միություն), ի դեմս գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանի, որը գործում է Միության կանոնադրության հիման վրա, և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Երևանի «Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կրթահամալիր), ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի, որը գործում է Կրթահամալիրի կանոնադրության հիման վրա (բոլորը միասին այսուհետ՝ Կողմեր), նպատակ ունենալով զարգացնել և ավելի արդյունավետ դարձնել արդեն իսկ առկա գործընկերությունը՝ կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. Կողմերը շարունակում են համագործակցությունը հանրակրթությունում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) ներդրման ուղղությամբ՝ ստեղծելով մեդիակրթության հանրակրթական և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի և ծրագրավորման խորացված ուսուցման դպրոցական ծրագրեր, դրանց իրագործման համար անհրաժեշտ միջավայր:
2. Կրթահամալիրը՝ որպես ՀՀ կրթության և գիտության նախարարության այլընտրանքային կրթական ծրագիր իրականացնող փորձարարական - հետազոտական հաստատություն, կշարունակի կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ աշխատանքները, այդ թվում՝ Ինթել կորպորացիայի հետ համատեղ իրականացվող «Անհատական համակարգիչ – դասընկեր» (Classmate PC) ծրագիրը, Մայքրոսոֆթ կորպորացիայի հետ իրականացվող «Նորարար դպրոց», «Նորարար ուսուցիչ», «Նորարար սովորող» ծրագրերը և «Ֆիրմա Ալֆա» ընկերության գործընկերությամբ իրականացվող «Էլեկտրոնային գրատախտակը, էլեկտրոնային գրիչները հանրակրթության մեջ» ծրագիրը:
3. Կողմերը գործնական քայլեր կիրականացնեն ուսումնական պրոցեսում «Դպրոցական համակարգիչ» փորձնական ծրագրի շրջանակում կիրառվող համակարգիչներում օգտագործման համար անհրաժեշտ կրթական բովանդակության մշակման և տեղադրման ուղղությամբ:

4. Կողմերը կձեռնարկեն միջոցներ հանրակրթությունում ՏՀՏ կիրառող օրինակելի դպրոցների ցանցի ձևավորման ուղղությամբ՝ ներգրավելով դպրոցներ երևանում, ՀՀ մարզերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, Վրաստանի Հանրապետությունում և այլ երկրներում:
5. Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն հանրակրթական դպրոցների մանկավարժների վերապատրաստմանը՝ միաժամանակ ապահովելով նաև հայաստանյան վերապատրաստող մասնագետի պատրաստում:
6. Կրթական պրոցեսում ՏՀՏ-ների կիրառման օրինակելի փորձի տարածման նպատակով Կողմերը համատեղ ջանքեր կգործադրեն միջազգային ուսումնա - հետազոտական ճամբարների, ինչպես նաև խորացված ուսուցման սովորողների օլիմպիադաների կազմակերպման համար:
7. Կողմերը կաջակցեն Կրթահամալիրում Հանրակրթական Դիջիտալ «Թվային միջոցները հանրակրթության արդյունավետ գործիքներ» ամենամյա բաց ստուգատեսի կազմակերպմանը:
8. Միությունը կաջակցի Կրթահամալիրում իր կողմից իրականացվող «Ռոբոտիքս» ծրագրի ներդրմանը:
9. Հիմնադրամը, Ընկերությունը և Միությունը սույն հուշագրով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական և մասնագիտական աջակցություն կցուցաբերեն նաև հետևյալ ուղղություններով.
 - կաջակցեն Կրթահամալիրին՝ սույն հուշագրով նախատեսված աշխատանքների համար անհրաժեշտ նոր գործընկերներ ձեռքբերելու հարցում,
 - Կրթահամալիրին հնարավորինս մասնակից կդարձնեն իրենց կողմից կազմակերպվող միջոցառումներին,
 - Կրթահամալիրի ավագ դպրոցի էլեկտրոնիկայի և ծրագրավորման խորացված ուսուցմամբ սովորողներին հնարավորություն կընձեռնեն իրենց մասնագիտական փորձառությունը կազմակերպելու ինչպես Ընկերության, այնպես և հայաստանյան մյուս ՏՀՏ ձեռնարկությունների արհեստանոցներում:
10. Սույն հուշագրի կնքման և իրականացման հետ կապված՝ Կողմերի փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ, որպես անձանց, որոնք կարող են լավագույնս իրականացնել սույն հուշագրով նախատեսված միջոցառումները:

11. Սույն հուշագրի փոփոխություններն ու լրացումները կարող են կատարվել բացառապես Կողմերի գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն հուշագրի անբաժանելի մասը:
12. Կողմերը հաստատում են, որ սույն հուշագրի կնքումը և իրականացումը լիովին բխում է իրենց շահերից և համապատասխանում իրենց շահերին:
13. Կողմերը հավաստում են, որ սույն հուշագրի կնքման պահին իրենց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքելու կամ կատարելու սույն հուշագիրը:
14. Սույն հուշագիրը բաղկացած է 3 (երեք) էջից, կազմված է հայերեն և կնքվում է 4 (չորս) հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:
15. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում (կնքված է համարվում) Կողմերի կողմից ստորագրման պահից:

Կողմերի վավերապայմաններն ու ստորագրությունները

**«Ձեռնարկությունների ինկուբատոր»
հիմնադրամ**

Հասցե՝ ք. Երևան, Հովսեփ Էմինի 123
Հեռախոս՝ (+374 10) 219797
Էլ. հասցե՝ info@eif.am



Տնօրեն՝
Բագրատ Ենգիբարյան




Կ.Տ.

«Յունիքոմփ» ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Չարենցի 37
Հեռախոս՝ (+374 10) 581111
Էլ. հասցե՝ info@unicomp.am


Տնօրեն՝
Արմեն Բալդոյան



Կ.Տ.


**«Ինֆորմացիոն տեխնոլոգիաների
ձեռնարկությունների միություն» ԻԱՄ**
Հասցե՝ ք. Երևան, Եալբանյան 29, բն. 36
Հեռախոս՝ (+374 10) 548881
Էլ. հասցե՝ info@uite.org


Գործադիր տնօրեն
Կարեն Վարդանյան



Կ.Տ.

**ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիր ՊՈԱԿ**
Հասցե՝ ք. Երևան, Բաբաջանյան 25,
Հեռախոս՝ (+374 10) 741112
Էլ. հասցե՝ info@mskh.am


Տնօրեն՝
Աշոտ Բլեյան



Կ.Տ.